

Պատմության քննական հարցաշար

1. Ե՞րբ է գահակալել Ուրարտուի արքա Արամեն:
2. Ո՞ր երկրի թագավորն է թագ շնորհել Պարույր Սկայորդուն:
3. Ե՞րբ են անկախ հռչակվել Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Ծոփքը:
4. Հռոմի սենատը ում ուղարկեց Հայաստան Տիգրան Մեծից Միհրդատ VI Եվպատորին պահանջելու:
5. Ում կողմից գերեվարվեց և Ալեքսանդրիա տարվեց Արտավազդ 2-րդը :
6. Ե՞րբ է կառուցվել Վաղարշապատի Սբ. Էջմիածին Մայր տաճարը:
7. 388-414թթ. որ արքան է ղեկավարել Հայաստանը:
8. Ե՞րբ է Թեոդորոս Ռշտունին վերամիավորել Հայաստանը:
9. Ե՞րբ է գահակալել Աշոտ 2-րդ Բագրատունին:
10. Ե՞րբ է Կիլիկիայում հաստատվել հայկական իշխանություն:
11. Ե՞րբ է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը:
12. Ո՞ր թվականներին էր Լենկ Թեմուրի առաջին արշավանքը Հայաստան:
13. Ե՞րբ է կնքվել Ամասիայի հաշտության պայմանագիրը:
14. 428թ-ին որ թագավորական դինաստիայի կառավարումն ավարտվեց :
15. 1701թ-ին ով էր ժամանել Ռուսաստան՝ Պետրոս 1-ին հանդիպելու:
16. Ե՞րբ է սկսվել 19-րդ դարի առաջին ռուս-թուրքական պատերազմը:
17. Որ ժողովին էր ուղղված Խրիմյան Հայրիկի <<մեր շերեփը թղթից էր... >> հայտնի
18. Ե՞րբ է Ռուսաստանի կայսրը չեղյալ հայտարարել իր իսկ հաստատած հակահայ օրենքը՝ հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին:
19. Ե՞րբ է ընթացել առաջին աշխարհամարտը:
20. Հայոց Ազգային խորհուրդը ե՞րբ է հռչակել Հայաստանի անկախությունը:
21. Թուրք-հայկական պատերազմը ե՞րբ է սկսվել:
22. Ե՞րբ սկսվեց Արցախյան շարժումը Հայաստանի հետ միավորվելու նպատակով.
23. Ե՞րբ է ընդունվել <<Հռչակագիր ԼՂՀ հռչակման>> մասին փաստաթուղթը:
24. Հայաստանի մայրաքաղաքներից ո՞րն է հիմնադրվել Կարթագենի հայտնի գորավար Հանիբալի խորհրդով և աջակցությամբ:
25. Ո՞րն է ՀՀ-ի ամենաբարձր լեռնագագաթը:
26. Որքա՞ն էր Մեծ Հայքի տարածքը:
27. Ինչպես է այլ կերպ անվանվել Վանա լիճը:
28. Օտարների կողմից Հայաստանը ի՞նչ է անվանվել:
29. Ըստ հայոց ծագումնաբանության տեսության ումի՞ց է սերում Հայկ Նահապետի հայր Թորգոմը:
30. Ո՞ր պատմական իրադարձությունն է համարվում Բուն Հայոց տոմարի սկիզբը:
31. Ո՞վ էր Մարդուրի 1-ինի որդին:
32. Թագավոր հռչակվելուց հետո ո՞ր դինաստիայի շառավիղ է իրեն ներկայացրել Արտաշես 1-ինը:
33. Ո՞վ էր հեթանոս հայերի մայրության և պտղաբերության աստվածուհին:
34. Որքա՞ն էր Փոքր Հայքի տարածքը:
35. Ո՞ր բերդում էր ամրացել և պարսիկներին հերոսաբար դիմադրել Փառանձեմ թագուհին:
36. Ավարայրի ճակատամարտում ով էր գլխավորում պարսկական զորքը:
37. Ո՞վ էր Բագրատունիների վերջին արքան:
38. Նշվածներից որը չի հանդիսանում Կիլիկիայի Հայաստանի թագավորական դինաստիա:
39. Ո՞րն է Սուրբ Գրքից հայերեն թարգմանված և գրված առաջին նախադասությունը:
40. Որքա՞ն հայ է կոտորվել 1894-1896թթ համիդյան կոտորածների արդյունքում Օսմանյան Թուրքիայում:
41. Ո՞ր պայմանագրով է որոշվել ՀՀ-ին միացնել 90.000քկմ տարածք պատմական Հայաստանի հողերից, կտրելով Թուրքիայից:
42. Ովքե՞ր են երդվել հետևյալ խոսքերով՝ „Այսուհետև իմ բարձր լինելու են Հայաստանի լեռները, իսկ բաղձալի երազանքը՝ հայրենիքի համար մեռնելը „:
43. Ի՞նչ էր կոչվում Մեծ Հայքի 15 խոշոր վարչական միավորներից յուրաքանչյուրը:
44. 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվեի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը...
45. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

- Ա. Զաքարյանների իշխանությունը Հայաստանում
- Բ. Մելջուկ թուրքերի արշավանքները և տիրապետությունը Հայաստանում
- Գ. Մոնղոլների արշավանքները և տիրապետությունը Հայաստանում
- Դ. Բագրատունյաց թագավորության անկումը

46. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

- ա) 1920թ. հայ-թուրքական պատերազմի սկիզբը
- բ) Երևանի հայ-ռուսական պայմանագրի կնքումը
- գ) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից
- դ) Ալեքսանդրապոլի պայմանագիրը

47. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին:

- Ա. Գյուլիստանի պայմանագիր
- Բ. Թուրքմենչայի պայմանագիր
- Գ. Սան-Ստեֆանոյի պայմանագիր
- Դ. Բեռլինի պայմանագիր

3. Ազգային կազմակերպությունների և կուսակցությունների հիմնման տարեթվերը համապատասխանեցնել:

- Ա. „Բարենպաստ կնկերություն „
- Բ. Հայ Հեղափոխական Դաշնակցություն
- Գ. Հնչակյան
- Դ. Արմենական

49. Ըստ 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանն անցնելու էր նահանգներով

50. Պատմական իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվերին:

- ա) Արցախի բռնակցումը Ադրբեջանին
- բ) Նախիջևանի մարզը Ադրբեջանին հանձնելը
- գ) Լեռնային Ղարաբաղի նիսնավար մարզի կարգավիճակ տրամադրելու որոշման ընդունումը
- դ) Զավախքի բռնակցումը Վրաստանին

51. Ում է հաջորդել Ուրարտուի արքա Իշպուինին:

52. Հայաստանի, Բաբելոնի և Մարաստանի դաշնակից զորքերը ե՞րբ կործանեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն:

53. Ե՞րբ է տեղի ունեցել Մազնեսիայի ճակատամարտը:

54. Ե՞րբ է Տիգրան Մեծը Շոփքը միավորել Մեծ Հայքի թագավորությանը:

55. Ե՞րբ է գահակալել Արտաշես 2-րդը:

56. Ո՞ր գետում են Տրդատ Մեծը, արքունիքը և բազմահազար հայեր օծվել և դարձել քրիստոնյա:

57. Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը:

58. Ու՞մ տիրապետության օրոք է կազմվել Արմինիա փոխարքայությունը/ ոստիկանություն/:

59. 855-1045թթ. Հայաստանում գահակալել են:

60. Ե՞րբ է գահակալել Աբաս Բագրատունին:

61. Ե՞րբ է տեղի ունեցել Բասենի ճակատամարտը:

62. Ե՞րբ է հիմնադրվել Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում:

63. Ե՞րբ է կնքվել Կասրե Շիրինի պայմանագիրը:

64. Ե՞րբ է Մեսրոպ Մաշտոցը ստեղծել Հայոց գիրը:

65. Ե՞րբ է կնքվել պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև Կ. Պոլսում:

66. Ե՞րբ է կնքվել Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը:

67. Ե՞րբ է հիմնվել Արմենական կուսակցությունը:

68. Ե՞րբ են սկսվել հայ-թաթարական ընդհարումները:

69. Ե՞րբ են ձերբակալվել հայ մտավորականները:

70. Ե՞րբ է կնքվել Բաթումի պայմանագիրը:

71. Ե՞րբ է ստորագրվել հայ-ռուսական Երևանի համաձայնագիրը իշխանափոխության մասին:

72. Ե՞րբ է տեղի ունեցել Սպիտակի երկրաշարժը:

73. Ե՞րբ է կնքվել զինադադար Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի միջև:

74. Ո՞վ է հիմնադրել Էրեբունի Երևանը:
75. Ո՞րը Վանա լճի կղզիներից չէ:
76. Ու՞մ որդին էր Հեթում 1-ինը:
77. Ինչպե՞ս է կոչվում այն լեզվաընտանիքը, որին պատկանում է հայերենը:
78. Ու՞ր է թափվում Կուր գետը:
79. Ո՞վ էր հայոց դիցաբանության գլխավոր աստվածը:
80. Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 9-րդ դարի հիշատակվող պետություններից է...
81. Ու՞մ որդին էր Արգիշտի 1-ինը:
82. Մեծ Հայքի ո՞ր նահանգում Տիգրան 2-րդը կառուցեց մայրաքաղաք:
83. Ո՞վ էր հեթանոս հայերի արևի և լույսի աստվածը:
84. Ովքե՞ր են Հայ առաքելական եկեղեցու հիմնադիրները:
85. Որտե՞ղ է հուղարկավորված Մեսրոպ Մաշտոցը:
86. Հայոց ո՞ր կաթողիկոսն է Աշոտ 1-ին Բագրատունուն օձել հայոց թագավոր:
87. Ո՞րն էր սելջուկ թուրքերի նախահայրենիքը:
88. Մլեհը Կիլիկիայի հայոց պետության մայրաքաղաք դարձրեց՝
89. Ո՞վ է գլխավորել Սյունիքի ազատագրական պայքարը 1728-1730թթ:
90. Ո՞վ էր ղեկավարում Բաշ Ապարանի ճակատամարտը:
91. Լեռնահայաստանի սպարապետ ընտրվեց:
92. Ո՞ր քաղաքն էին օտարներն անվանում Հայկական Կարթագեն
93. Ինչպե՞ս էր կոչվում Շուշիի ազատագրման օպերացիան:
94. 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացած ժողովրդական պատգամավորների նստաշրջանը որոշեց...
95. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:
- ա) Ամասիայի պայմանագրի կնքումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև
 - բ) Թյուրքական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետությունը Հայաստանում
 - գ) Լենկ Թեմուրի արշավանքները Հայաստան
 - դ) Կասրե-Շիրինի պայմանագրի կնքումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև
96. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:
- ա) Փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը
 - բ) Մոսկվայի ռուս-թուրքական ապօրինի պայմանագիրը
 - գ) Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը
 - դ) Արցախի բռնակցումը Ադրբեջանին
97. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին:
- Ա. Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը
 - Բ. Սևրի պայմանագրի կնքումը
 - Գ. Վուդրո Վիլսոնի իրավարարվճռի հռչակումը
 - Դ. Հայաստանի առաջին Հանրապետության անկումը
98. Կամավորական ջոկատները համապատասխանեցնել հրամանատարների հետ:
- Ա. Դրո
 - Բ. Քեռի
 - Գ. Անդրանիկ
 - Դ. Համազասպ
 - Ե. Վարդան
99. Թվարկվածներից ո՞ր շարքն է ընդգրկում միայն հայկական արքայատոհմերը:
100. Պատմական իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվերին:
- ա) Շուշիի ազատագրումը
 - բ) Լաչինի միջանցքի բացումը
 - գ) Արցախյան շարժման սկիզբը
 - դ) Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին որոշման ընդունումը

Ուրարտական ո՞ր արքան է գահակալել Ք.ա 786-764թթ:

101. Ե՞րբ է գահակալել Երվանդ Վերջինը:

102. Արտաշեսյան ո՞ր արքան է գահակալել Արտաշես 1-ինից հետո:
104. Ե՞րբ են գահակալել Արտաշեսյան արքաները:
105. Ե՞րբ է հռոմեական բանակը մտել Հայք Լուկուլլոսի գլխավորությամբ և պաշարել Տիգրանակերտը:
106. Արտաշեսյան ո՞ր արքան է գահակալել Տրդատ 1-ինից հետո:
107. Մինչև ո՞ր թվականն է գահակալել Տրդատ 3-րդ Մեծը:
108. Ե՞րբ է կնքվել Նվարսակի հաշտության պայմանագիրը:
109. Ե՞րբ է Հայոց իշխան և սպարապետ Աշոտ Բագրատունին ճանաչվել հայոց արքա:
110. Ե՞րբ է Անին հռչակվել Բագրատունիների մայրաքաղաք:
111. Ո՞ր թվականներին են Ջաքարյանները ազատագրել Հայաստանի հյուսիս-արևելյան մասը և հիմնել իշխանապետություն:
112. Ե՞րբ է Լևոն 2րդ-ը օժվել Կիլիկիայի Հայոց թագավոր:
113. Ե՞րբ է տեղի ունեցել Օսմանյան Թուրքիայի և Մեֆյան Պարսկաստանի առաջին ճակատամարտը:
114. Ե՞րբ է գահակալել Ռուբեն 1-ին Ռուբինյանը:
115. Ո՞վ փոխարինեց Դավիթ Բեկին Սյունիքի ազատագրական պայքարում:
116. Ցարական Ռուսաստանի կառավարությունը ե՞րբ է լուծարել Հայկական Մարզը:
117. Որտե՞ղ է հիմնվել Հնչակյան կուսակցությունը:
118. Ե՞րբ է ավարտվել Առաքելոց վանքի կռիվը:
119. Ե՞րբ են տեղի ունեցել Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը:
120. Սերում Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը ստորագրվեց...
121. Ե՞րբ է կազմավորվել ԽՍՀՄ-ը:
122. Ե՞րբ է Հայաստանի Գերագույն Խորհուրդը „Հռչակագիր Հայաստանի անկախության մասին,, փաստաթուղթը ընդունել.
123. Մեծ հայրենադարձությունը Սփյուռքից դեպի Խորհրդային Հայաստան ու՞մ թույլտվությամբ է ընթացել .
124. Ո՞ր արքայի օրոք է Հայաստանը ընդունել քրիստոնեությունը:
125. Ո՞ր գետն է սկիզբ առնում Սևանա լճից:
126. Ի՞նչ անունով է հայտնի Սևանա լիճը:
127. Ո՞վ էր Տիրը հայկական դիցարանում
128. Ու՞ր են թափվում Արաքս և Կուր գետերը:
129. Ըստ Հայկական ավանդության՝ ու՞մ անունից են առաջացել „արմեն,, և „Արմենիա,, անվանումները:
130. Որքա՞ն էր Ռուսայի ջրանցքի երկարությունը:
131. Ի՞նչ էր անվանվում Հայաստանը Բեհիսթունյան արձանագրության բաբելերեն բաժնում:
132. Ո՞րն էր Սասանյան Պարսկաստանի պետական կրոնը:
133. Արշակունի ո՞ր արքան է կառուցել Գառնիի հեթանոսական տաճարը:
134. Որտե՞ղ է բանտարկված եղել Գրիգոր Լուսավորիչը 13 տարի:
135. Որքա՞ն էր հայոց զորքի թիվը Ավարայրի ճակատամարտում:
136. Բագրատունի ո՞ր արքան է Կարսը դարձրել մայրաքաղաք:
137. Ո՞րն էր սելջուկների հիմնած 1 –ին պետությունը Փոքր Ասիայում:
138. Ո՞վ է եղել Կիլիկիայի առաջին օժված թագավորը:
139. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում ո՞ր պայմանագիրն է կնքվել:
140. ՀՀ զինանշանի հեղինակներն էին...
141. 1921թ մարտի 16-ին Մոսկվայի ապօրինի պայմանագրով Հայաստանը կորցրեց...
142. Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը. „Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես,,:
143. Երիտթուրքերի ծրագրով Բոսֆորից մինչև Չինաստան և Սիբիրի հարավ ընդգրկող թուրքալեզու ժողովուրդների մեկ միասնական պետությունը լինելու էր...
144. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Արտաշես 1-ինի կողմից անցկացված հողային բարեփոխումը:
145. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:
- ա. Ադանայի հայերի կոտորածը
 - բ. Երիտթուրքերի հեղաշրջումը Թուրքիայում
 - գ. Հայ-թաթարական բախումները Կովկասում
 - դ. Հայոց Մեծ Եղեռնը
146. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) 1-ին Հանրապետության հիմնում

բ) Մայիսյան հերոսամարտեր

գ) Բաթումի պայմանագիր

դ) Սևրի պայմանագիր

147. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին:

Ա. Երևանի հայ-ռուսական պայմանագրի կնքումը

Բ. Փետրվարյան ապստամբությունը , Երևանի գրավումը

Գ. Մոսկվայի ռուս –թուրք.ապօրինի պայմանագրի կնքումը

Դ. Լեռնային Ղարաբաղի հանձնումը Ադրբեջանին

148. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին:

Ա. Մանազկերտի ճակատամարտը թուրքերի դեմ

Բ. Բասենի ճակատամարտը թուրքերի դեմ

Գ. Սևանի ճակատամարտը արաբների դեմ

Դ. Ավարայրի ճակատամարտը պարսիկների դեմ

149. Ընտրել այն շարքը, որը կազմված է միայն Վանա լճի կղզիներից:

150. Պատմական իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվերին:

ա) Բրեստ-Լիտովսկի պայմանագիր

բ) Բաթումի պայմանագիր

գ) Սևրի պայմանագիր

դ) Վիլսոնի իրավարար վճիռ

151. Վանի արքաներից ո՞վ է կառավարել Ք. ա. 764-735թթ.

152. Ե՞րբ են Հայաստանի տարածքում 1-ին անգամ հիշատակվում Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես առանձին վարչական միավորներ:

153. Ո՞վ էր հայոց արքան Տիգրան Մեծից առաջ՝

154. Ք. ա. 66թ-ի Արտաշատի պայմանագրի ռվքե՞ր ստորագրեցին:

155. Ք. ա. 189թ-ից Հայաստանում սկսվեց՝

156. Ե՞րբ են գահակալել Արշակունի արքաները:

157. Ե՞րբ է գահակալել Պապ թագավորի հայրը:

158. Ե՞րբ է տեղի ունեցել Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:

159. Բագրատունի արքաներից ո՞վ է երկիրը կառավարել մինչև 914թ.-ը:

160. Ե՞րբ է գահակալել Գագիկ 2-րդ Բագրատունին:

161. Ո՞ր թվականներին մոնղոլները գրավեցին Հայաստանը:

162. 1375թ-ին ի՞նչ տեղի ունեցավ Կիլիկիայի Հայաստանում:

163. Ո՞րն է Հայոց Բուն Տոմարի / Մեծ թվականի/ սկիզբը:

164. Ե՞րբ է տեղի ունեցել Հայկ Նահապետի և Բելի ճակատամարտը:

165. Ե՞րբ է կնքվել Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:

166. Նշված պայմանագրերից ո՞րի 16-րդ հոդվածն էր վերաբերում հայերին՝

167. Ո՞ր քաղաքում է հիմնվել Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը:

168. Ե՞րբ է տեղի ունեցել Ադանայի հայերի կոտորածը:

169. Ե՞րբ է կնքվել Բաթումի հաշտության պայմանագիրը:

170. Ե՞րբ հայտնի դարձավ ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար վճիռը՝ հայ-թուրքական սահմանագծման վերաբերյալ:

171. Ե՞րբ գազաթնակետին հասավ Խորհրդային Հայաստանում զանգվածային ձերբակալությունների ու բռնությունների ալիքը:

172. Ե՞րբ է Հայաստանի Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակել անկախ պետություն:

173. Ե՞րբ է տեղի ունեցել Սումգայիթի հայերի կոտորածը:

174. Հայոց կաթողիկոսներից ո՞վ օգնեց Մաշտոցին՝ Հայոց գրերը ստեղծելիս:

175. Ու՞մ գրչին է պատկանում „Աշխարհացույց„ աշխատությունը:

176. Ո՞ր լճում է գտնվում Ախթամար կղզին:

177. Ո՞վ էր Նանե դիցուհին հայկական դիցարանում:

178. Քանի՞ նահանգ ուներ Փոքր Հայքը:

179. Նշվածներից ո՞րն է Հայկական լեռնաշխարհի ամենահին պետությունը

180. Նշված քաղաքներից ո՞րն `2801 տարեկան`

181. Պարույր Սկայորդին ո՞ր երկրների հետ դաշինք կնքեց

182. Ո՞վ էր հեթանոս հայերի հյուրընկալության աստվածությունը

183. Ծովի մակարդակից քանի՞ մետր է բարձր Սիփանը:

184. Ո՞վ է հաջորդել Տիրան Արշակունի արքային:

185. Որքա՞ն էր Սուրբ Վարդանանց նահատակների թիվը:

186. 961թ-ին նշվածներից ո՞ր քաղաքը դարձավ հայոց մայրաքաղաք:

187. Ի՞նչ պաշտոն էր զբաղեցնում Ջաքարե Ջաքարյանը վրաց արքունիքում:

188. Որքա՞ն հայ է գաղթեցվել շահ Աբասի հրամանով 1604թ-ին:

189. Ո՞ր պայմանագրով է ավարտվել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը:

190. Բաթումի պայմանագրով Հայաստանի տարածքը կազմելու էր

191. 1921թ. քանի՞ տոկոս էին կազմում հայերը ԼՂ. բնակչության մեջ:

192. Ո՞վ է թևավոր դարձած այս խոսքերի հեղինակը. „Մահ ոչ իմացյալ՝ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն,„:

193. Արցախյան ազատամարտում ո՞ր բնակավայրի ազատագրումն ստացավ „Հարսանիք լեռներում,՝ անվանումը:

194. Տիգրանակերտը հանձնվեց Լուկուլլոսին, որովհետև...

195. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ

ա. Առաջին աշխարհամարտի ավարտը

բ. Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը

գ. Մայիսյան հերոսամարտերը Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում

դ. Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումը

196. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ

ա) Արցախյան շարժման սկիզբը

բ) Բաքվի հայերի կոտորածը

գ) Սումգայիթի հայերի կոտորածը

դ) Սպիտակի երկրաշարժը

197. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին

ա. Արցախյան շարժման սկիզբը

բ. Զինադադարի կնքումը Հայ-ի, Արցախի և Ադրբ-ի միջև

գ. ԼՂՀ անկախության հռչակումը

դ. ՀՀ անկախության հռչակումը

198. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին

ա. Հայաստանի բաժանումը Բյուզ. և Պարսկ. միջև

բ. Հայաստանի 1ին բաժանումը Թուրք. և Պարսկ. միջև

գ. Հայաստանի բաժանումը Հռոմի և Պարսկ. միջև

դ. Հայաստանի 2րդ բաժանումը Թուրք. և Պարսկ. միջև

199. 1920 թ նոյեմբերի 22-ին հռչակված Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին էին անցնում...

200. Իրադարձությունները համապատասխանեցնել գործիչներին

ա) 1890-ական թթ հայերի զանգվածային կոտորածները

բ) 1915-1922թթ Հայ Մեծ Եղեռն

գ) 1905թ. հայ-թաթարական բախում

դ) Նեմեսիս վրեժխնդիր գործունեություն

